«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

24 նոյեմբերի, 2026 թ. N 21-L

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) հարկային և իրավական այլ հարցերի հանձնաժողովի կանոնադրության 7.1 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության հարկային և իրավական այլ հարցերի հանձնաժողովի 2027 թվականի գործունեության տարեկան ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված
«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2026 թ. նոյեմբերի 24-ի N 21 - L որոշման

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»

հասարակական կազմակերպության

հարկային և իրավական այլ հարցերի հանձնաժողովի

2027 թվականի գործունեության տարեկան ծրագիրը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) հարկային և իրավական այլ հարցերի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2027թ. գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Գործունեության ծրագիր) կազմվել է ի կատարումն Հանձնաժողովի կանոնադրության 7.1 կետի՝ նպատակ ունենալով ապահովել Հանձնաժողովի գործառույթների արդյունավետ իրականացումը և Պալատի խորհրդի կողմից Հանձնաժողովի գործունեության նկատմամբ արդյունավետ հսկողության իրականացումը:

ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Գործունեության ծրագրի հիմքում դրված են Հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված ինչպես հիմնական («պարտադիր»), այնպես էլ այլ («ոչ պարտադիր») գործառույթները և նպատակները:

Գործունեության ծրագիրը կազմելիս նախատեսվող միջոցառումները և դրանց կատարման ժամկետները պլանավորվել են՝ ելնելով յուրաքանչյուր կոնկրետ գործառույթի բնույթից, նրա իրականացման նկատմամբ սահմանված պահանջներից և այն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներից:

Հանձնաժողովի կողմից այլ գործառույթների իրականացման համար կոնկրետ միջոցառումներ և ժամկետներ սահմանված չեն՝ դիտարկելով դրանք որպես ընթացիկ աշխատանքներ, որոնք կիրականացվեն ըստ անհրաժեշտության:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

հ/հ	Գործառույթ	Միջոցառում	Ժամկետ
1	Իրավական ակտերի և դրանց նախագծերի ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում	Կուսումնասիրվեն ՀՀ պետական մարմինների կողմից մշակված հարկային, մաքսային, ինչպես նաև աշխատանքային և քաղաքացիական հարաբերությունները կարգավորող օրենսդրությանն առնչվող հարցերի վերաբերյալ իրավական ակտերը և	Հունվար-դեկտեմբեր: Առանձին իրավական ակտերի նախագծերի համար ժամկետ նախատեսված լինելու դեպքում՝ մինչև այդ ժամկետի ավարտը

h/h	Գործառույթ	Միջոցառում	Ժամկետ
		դրանց նախագծերը և, ըստ անհրաժեշտության, կներկայացվեն առաջարկություններ	
2	ՀՀ ՖՆ և ՀՀ ՊԵԿ գործող, խորհուրդների նիստերում քննարկվող հարցերի և (կամ) իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրություն և համապատասխան առաջարկությունների ներկայացում	Կուսումնասիրվեն նիստերում քննարկվող հարցերը և (կամ) իրավական ակտերի նախագծերը և կներկայացվեն համապատասխան առաջարկություններ՝ ինչպես գրավոր, այնպես էլ նիստերին մասնակցության միջոցով	Համապատասխան խորհրդի կողմից նշանակված ժամկետներում
3	Շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների նախաձեռնում	Դասընթացների կազմակերպում՝ հանձնաժողովի անդամների կամ հրավիրված մասնագետների միջոցով	Հունվար-դեկտեմբեր
4	«Կլոր սեղան» քննարկումների նախաձեռնում	Պալատի անդամների հետ հանդիպումների կազմակերպում ըստ անհրաժեշտության՝ առաջարկությունների փաթեթների մշակում (երկիմաստ կամ տարընթերնելի ձևակերպումների վերաբերյալ), պատկան մարմիններին ներկայացնելու նպատակով	Հունվար-դեկտեմբեր

h/h	Գործառույթ	Միջոցառում	Ժամկետ
5	Պալատի խորհրդի հանձնարարությամբ և Պալատի ներքին իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ	Միջոցառումներն ըստ անհրաժեշտության	Հունվար-դեկտեմբեր

Հարկային և իրավական այլ հարցերի
հանձնաժողովի նախագահ՝ Վահան Գրիգորյան